ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06.09.2021թ.
ժամը 12^{50}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի պետ, գնդապետ՝ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, ավագ սպա՝ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ՝ Ռ. Զադոյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԱՅ ԹԻ ԹԻՄ» ՍՊ ընկերության՝ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու վերաբերյալ.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԱՅ ԹԻ ԹԻՄ» ՍՊ ընկերության՝ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու վերաբերյալ.

(Գ. Պողոսյան)

1.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում «ԱՅ ԹԻ ԹԻՄ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի՝ 09.08.2021թ. որոշմամբ ճանաչվել էր ընտրված մասնակից: 19.08.2021թ. «ԱՅ ԹԻ ԹԻՄ» ՍՊԸ-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 կետերի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: «ԱՅ ԹԻ ԹԻՄ» ՍՊԸ-ն վերը նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները (ընդհանրապես չի ներկայացրել):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովի 06.09.2021թ. որոշմամբ՝ «ԱՅ ԹԻ ԹԻՄ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2.1 06.09.2021թ.՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը, որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակից ճանաչել՝ «Հենրի ռադիո» ՍՊԸ-ին:

2.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝ Տ. Մաթևոսյան

Գնահատող՝ Խ. Երիցյան

Գնահատող՝ Ռ. Զադոյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան